«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը (ձեռը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը

Հաստատություն՝ «Նոր Երզնկայի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Հասմիկ Մանուկյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023

Բովանդակություն

Ներածություն----------3

Ինչ է ներառական կրթությունը----------6

Ուսումնառության ընդհանրական միջավայրի կառուցվածք----------11

Գնահատման հիմնախնդիրները ներառական կրթության համատեքստում----------13

Ինչ է դրական վարքի ձևավորմանն ուղղված միջամտությունն ու աջակցությունը

----------15

ԱՈՒՊ-ի դերը ներառական կրթության կազմակերպման գործընթացում----------16

Բազմազան կրթական կարիքներ ունեցող երեխաների դասվանդելու երեք մոտեցում-
----------18

ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալական և հոգեբանական ներառական բարելավումը--
----------20

Վաղ տարիքի երեխաների զարգացման ներառականության ծրագրեր----------23

Ներառական կրթական արժեհամակարգը որպես այդ կրթության շրջափուլային զարգացման հանրագումար----------25

Եզրակացություն----------27

Գրականություն----------29

Ներածություն

ՀՀ-ում գործող բոլոր հանրակրթական հաստատությունները պետք է դառնան ներառական, իսկ հանրակրթական և ներառական ծրագրերը պետք է համադրված լինեն՝ ունենալով իրենց համապատասխան արտահայտումը: ՀՀ համընդհանուր ներառական կրթության հռչակումը որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթությունը հանրակրթական զարգացման գործընթաց է որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում: Ներառական կրթությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և չունեցող երեխաները մասնակցում և միասին սովորում են միևնույն խմբում: Ներառական կրթության առանձնահատկություններից է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը և դաստիարակությունը կազմակերպել առանց երեխայի ընտանիքից անջատելու՝ ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հասարակության մեջ: Այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ: Սակայն կան բացթողումներ և չլուծված խնդիրներ: Ներառման բուն գաղափարի ոչ լիարժեք ուսումնասիրված լինելը, որոշ դեպքերում նաև բացակայությունը, որը առաջ է բերում բազմաթիվ խնդիրներ և խնդրահարույց իրավիճակներ, որոնց ժամանակ հանրակրթական հաստատության դաստիարակները, օգնության, ուղղորդման, մասնագիտական աջակցության կարիք են զգում:

Երեք քայլ, որ տանում է դեպի իրական ներառում: Որակյալ կրթության իրական երեք ցուցանիշներ են՝ մասնակցություն, համագործակցություն և հավասարություն:

Կրթության իրավունքը վերաբերում է բոլորին, ցավոք բազմաթիվ երեխաներ դեռևս դուրս են մնացել կրթությունից կամ մեկուսացվել են կրթական համակարգում, հատկապես հիմա, երբ ներառական կրթության գաղափարը դեռ լիովին չի ընդունվել ՀՀ ՆՈՒՀ (կրթական հաստատությունների) և հասարակության կողմից: Պարտեզների շենքերի մատչելիությունը, ինչպես նաև հատուկ նյութերի և սարքավորումների առկայությունը պետք է ապահովված լինեն այնպես, որ խոչընդոտներ չհանդիսանան որևէ երեխայի հաստատությունում սովորելու համար: Ճկուն ուսումնական ծրագրերը կարևոր են մանկապարտեզների զարգացման համար, որպեսզի յուրաքանչյուր

երեխա ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Ուսուցումը պետք է խթանի և ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացմանը: Յուրաքանչյուր երեխայի համար լավագույն և անփոխարինելի մրջավայրն իր ընտանիքն է, իր բակը, իր համայնքը և իր պարտեզը, ու երբ նա մեծանա, գիտակցի նաև, որ լավագույն վայրը աշխարհում՝ իր հայրենիքն է:

Ներառումն ընդգրկուն հասկացություն է, որը սահմանվել է հռչակագրով խթանվող 1990 թվականի Ջոմթիենի միավորված ազգերի կազմակերպության «Կրթություն բոլորի համար» օրակարգի շուրջ միջազգային քննարկումների համատեքստում: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ՅՈՒՆԻՍԵՖԻ հայաստանյան գրասենյակը կարևոր դեր են կատարել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական միջավայր ներառելու անհրաժեշտության հարցի վրա ուշադրություն հրավիրելու առումով:

Հայաստանում ներառական կրթության զարգացմանը նպաստող բազմաթիվ օրենքների գոյությանը՝ հասարակության մեջ և կրթության ոլորտի տարբեր մակարդակներում դռևս առկա են երեխաներին իրենց հասակակիցների հետ կրթության մեջ լիարժեք ներառելու խոչրնդոտներ:

2003 թվականին Հայաստանում իրականացվող կրթության բարեփոխումներն ուղղված էին նոր մոտեցումների ներդրմանն ու որակյալ կրթության խթանմանը հատկապես խմբասենյակում ուսումնական միջավայրը փոխելու և երեխայակենտրոն մոտեցումների մասնավորապես համագործակցային ուսումնառության ներդրման միջոցով: Այսօր առանցքային հարցերից մեկը հանրակրթական դաստիարակների դժվարություններն են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին դասվանդելու և խմբասենյակում ներառական մրջավայր ստեղծելու հարցերում: Վերջին տարիներին կրթության մատչելիություն, ուսման հավասարություն ու որակ ապահովելու նպատակով Հայաստանի կառավարությունը մեծ նշանակություն է տալիս մանկավարժական կրթությանը: Մանկավարժական կրթությունը պետք է ապահովի հիմնական ընկալումներ մարդկային բազմազանության, աճի ու զարգացման, մարդու իրավունքների հաշմանդանության վրա հիմնցած մոդելի և ներառական մանկավարժության, այդ թվում երեխաների ֆունկցիոնալ կարողությունների վերաբերյալ՝ ներառական կրթության միջավայրերում դաստիարակների մասնակցությունն ապահովելու համար:

Համեմատական վերլուծություններ անելով ներկայացվում են բազմաթիվ գործիքներ մեթոդներ և գործնական ու գիտափորձերով արդյունավետությունը հիմնավորված

մոտեցումներ: Դրանք փորձարկվել, գնահատվել են և դրանց արդյունավետությունն ապացուցել է բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքում:

Ինչ է ներառական կրթությունը

Այս եզրույթը սահմանվում է որպես մոտեցում, որը չի բացառում որևէ երեխայի կրթությունը: Ներառական կրթության հիմքում մարդու՝ կրթությունից օգտվելու իրավունքն է: Կրթական համակարգը ներառական է, եթե ներառում է բոլոր երեխաներին և ողջունում ու օժանդակում է նրանց սովորելու հարցում: Ոչ ոք չպետք է բացառվի: Բոլոր երեխաները, ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներն ունեն կրթության իրավունք: Ներառումը սովորողների բազմազանությանը դրականորեն արձագանքելու և անհատական տարբերությունները ոչ թե որպես խնդրի ընկալում, այլ որպես ուսուցման բովանդակությունը հարստացնելու հնարավորություն է: Ներառումը համակարգային բարեփոխման շարունակական գործընթաց է, որը նախատեսում է փոփոխություններ դասավանդման բովանդակության և մեթոդաբանության մեջ և ուսումնական ծրագրերում, խմբասենյակում, խաղալու համար հատկացված տարածքներում, կրթության քաղաքականությունում և ռազմավարությունում՝ տվյալ տարիքի բոլոր երեխաներին իրենց պահանջներին ու նախասիրություններին լավագույնս համապատասխանող հավասար և մասնակցային ուսումնական փորձառության ու միջավայր տրամադրելու տեսլականով:

Կրթության ներառականությունը հասկացություն է, որը վերաբերում է երեխաների բոլոր խմբերին, ուշադրություն են դարձրել զարգացման խանգարումներ և սոցիալական մշակութային խոչընդոտների ու կարծրատիպային վերաբերմունքի հետևանքով կրթությունից դուրս մնացող երեխաների վրա:

Կկիրառվի երեխայի կրթական կարիքների արձագանքման եռաստիճան համակարգ:

Օրենքի կիրառման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանա երեք մակարդակներում՝ հանրակրթական հաստատությունում տարածքային և հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից: Մինչև 2025 թվականի օգոստոսի 1-ը կներդրվի համընդհանուր ներառականության համակարգը՝ համաձայն ՀՀ կառավարության հաստատած գործողությունների պլանի համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանին հավանություն տալու մասին:

Նոր ձևավորված համակարգը հնարավորություն կընձեռնի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունն ու դաստիարակությունը կազմակերպել առանց երեխային ընտանիքից անջատելու՝

ապահովելով նրա համակողմանի հասարակական զարգացումը և ներառելով նրան հանրակրթական ուսումնական հաստատություն: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսում է ընդլայնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները ստեղծելով ներառական կրթության համակարգ բոլոր հանրակրթական դպրոցներում:

Ներառական կրթություն

Մարդիկ ծնվում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր տարբեր առանձնահատկություններով կամ նման առանձնահատկություններ են ձեռք բերում կյանքի ընթացքում: Որոշ երեխաներ առանձնահատուկ պայմանների կարիք ունեն: Այդ երեխաներն ունեն հավասար կրթության իրավունք: Ներառական կրթությունը միտված է հաղթահարելու երբեմնի պատմական անարդարությունը, երբ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները կրթություն ստանալու իրավունք չեն ունեցել: Ներառական կրթության գաղափարական ընդհանրությունը բոլոր երեխաների հավասար կրթության իրավունքն է:

Ինչ է ներառական կրթությունը և բացի կրթական ոլորտից ինչ ոլորտների հետ է այն առնչվում: Այս հարցը կարևոր է հասկանալու համար, թե ինչ կարող է անել դաստիարակը:

Տարբեր ոլորտներ, ինչպիսիք են հոգեբանությունը, մանկավարժությունը, փորձում են նեղ մասնագիտական տեսանկյունից ախտորոշել ներառականությունը, ինչը շատ դեպքերում ամբողջական բնորոշում չի կարող լինել: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներով զբաղվող ոլորտները պետք է համախմբված գործեն՝ փորձելով հնարավորինս ամբողջական պատկեր կազմել և խուսափել ընդհանրական պատկերացումներից, քանի որ միշտ գործ ունենք երեխայի հետ:

Դաստիրակը միշտ պետք է հաշվի առնի այն, որ՝

1. Գործ ունի կոնկրետ երեխայի հետ, որն ունի իր հետաքրքրությունները հակումները և պահանջմունքները:

2. Երեխայի կարիքների գնահատումից զատ, անհրաժեշտ պայման է երեխայի նկատմամբ մշտապես ուշադիր լինելը և նրանց հետևելը:

3. Շատ դեպքերում երեխայի վարքի, սովորությունների և վիճակի պարզ նկարագրությունը մեզ կարող է ավելին տալ, քան փաստաթղթում նշված եզրակացությունը:

Դաստիրակները կարող են փաստել, որ նույն թեմայով, բովանդակությամբ և մատուցման եղանակով անցկացված դասը մի խմբում հաջողվում է, իսկ մյուսում ոչ այնքան: Պատճառը, իհարկե այն է, որ երեխաները անհատականություններ են, յուրաքանչյուր խումբ ինքնատիպ է և դաստիարակները միշտ աշխատում են նոր երեխաների հետ չկրկնվող իրավիճակներում:

Ներառական կրթության նպատակներից է սոցիալականացումը: Այն, որ մինչև ներառական կրթության ներդրվելը հատուկ խնամք պահանջող երեխաներին հավաքում էին հատուկ հաստատություններում, վկայում է սոցիալականացման գործընթացը լիարժեք չէր կատարվում:

Նորից պետք է նշել այն հանգամանքը, որ միշտ գործ ունենք կոնկրետ խմբի կոնկրետ երեխաների հետ: Այսպիսով հաշվի առնելով խումբը և երեխային՝ պետք է հասկանալ, թե ինչ ճանապարհով ներգրավել առանձնահատկություններ ունեցող երեխային:

Ներառումը ընդգրկուն է, որը սահմանվել է հռչակագրով խթանվող 1990 թվականի Ջոմթիենի միավորված ազգերի կազմակերպության «Կրթություն բոլորի համար» օրակարգի շուրջ միջազգային քննարկումների համատեքստում: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը և ՅՈՒՆԻՍԵՖԻ հայաստանյան գրասենյակը կարևոր դեր են կատարել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական միջավայր ներառելու անհրաժեշտության հարցի վրա ուշադրություն հրավիրելու առումով:

Հայաստանում ներառական կրթության զարգացմանը նպաստող բազմաթիվ օրենքների գոյությանը՝ հասարակության մեջ և կրթության ոլորտի տարբեր մակարդակներում դեռևս առկա են երեխաներին իրենց հասակակիցների հետ կրթության մեջ լիարժեք ներառելու խոչընդոտներ:

2003 թվականին Հայաստանում իրականացվող կրթության բարեփոխումներն ուղղված էին նոր մոտեցումների ներդրմանն ու որակյալ կրթության խթանմանը հաստկապես խմբասենյակում ուսումնական միջավայրը փոխելու և երեխայակենտրոն մոտեցումների, մասնավորապես համագործակցային ուսումնառության ներդրման միջոցով: Այսօր առանցքային հարցերից մեկը

հանրակրթական դաստիարակների դժվարություններն են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ուսուցանելու և խմբասենյակում ներառական միջավայր ստեղծելու հարցերում: Վերջին տարիներին կրթության մատչելիություն ուսման հավասարություն ու որակ ապահովելու նպատակով Հայաստանի կառավարությունը մեծ նշանակություն է տալիս մանկավարժական կրթությանը: Մանկավարժական կրթությունը պետք է ապահովի հիմնական ընկալումներ մարդկային բազմազանության, աճի ու զարգացման, մարդու իրավունքների հաշմանդամության վրա հիմնված մոդելի և ներառական մանկավարժության, այդ թվում աշակերտների ֆունկցիոնալ կարողությունների վերաբերյալ՝ ներառական կրթության միջավայրերում դաստիարակների մասնակցությունն ապահովելու համար:

Համեմատական վերլուծություններ անելով ներկայացվում են բազմաթիվ գործիքներ, մեթոդներ և գործնական ու գիտափորձերով արդյունավետությունը հիմնավորված մոտեցումներ: Դրանք փորձարկվել, գնահատվել են և դրանց արդյունավետությունն ապացուցել է բոլոր, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատանքում:

Համընդհանուր ներառականության առավելություններն ու բացթողումները

Ներառական կրթությունը ենթադրում է, որ երեխաները իրենց ողջ բազմազանությամբ և առանձնահատկություններով, սովորեն կողք կողքի նույն խմբում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացքում յուրաքանչյուր երևույթի բարդությունը: Ներառման սահմանումը ժամանակի ընթացքում փոխվել է, ինչի պատճառով էլ ավելի է մեծացել պատշաճ ներդրումների, ռազմավարության և չափորոշիչների մշակման պահանջը: Առկա է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր և մարտահրավերներ, այդ թվում դաստիարակների կրթությունը և վերապատրաստումները, պարտեզների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցումները, ինչպես նաև ծնողների ակնկալիքները, մոտեցումներն ու պատկերացումները: Ներառական կրթությունը համայնքներում հավուր պատշաճի ներդնելու համար անհրաժեշտ է, որ քաղաքականություն մշակողները

պարտեզները, դպրոցները, համալսարանները, ծնողները և այլ շահագրգիռ մասնակիցները ներգրավածություն ունենան այս գործընթացում: Հայաստանում ներառական կրթության համակարգը որպես ազգային քաղաքականություն պաշտոնապես ընդունվել է 2003 թվականին: Այսօր շատ հաստատություններ ապահովում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսումնառությունը, սակայն դաստիարակներից քչերն են մասնակցել այնպիսի վերապատրաստումների, որոնք թույլ կտան իրականացնել այդ երեխաների հետ ճիշտ աշխատանք տանել: Այս գրքում արծածվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների, հանրակրթության ոլորտի դաստիարակների, բազմամասնագիտական թիմերի, ինչպես նաև պարտեզների և ծնողների առջև ծառացած ամենօրյա հարցեր: Միառժամանակ այս գիրն օգտակար է լինելու բազմամասնագիտական թիմերի անդամներին, որոշումներ կայացողներին՝ երեխաների ուսումնական գործընացի մեջ լավագույնս ներգրավելու համար:

Ուսումնառության ընդհանրական միջավայրի կառուցվածք

Համընդհանուր ձևավորում հասկացությունն առաջին անգամ օգտագործել է Ռոն Մեյսը՝ նկարագրելու համար բոլորի, այդ թվում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի շինություններ կառուցելու գաղափարախոսությունը: Լայն իմաստով ճարտարապետական ընդհանուր ձևավորման նպատակն է ապահովել

բոլոր շինությունների մատչելիությունը՝ բոլորին հավասար սկզբունքով: Սակայն համընդհանուր ձևավորման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել նաև այլ բնագավառներում: Օրինակ՝ ճամփեզրի կտրվածքները, որոնք ի սկզբանե ստեղծվել են սայլակով տեղաշարժվողներին համար, անհրաժեշտ է նաև անվասայլակներով ծանրություն տեղափոխողներին, մանկասայլակով երեխայի հետ զբոսնող ծնողին, հեծանվորդին և այլոց:

Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը

Տարբերակված ուսուցումը դաստիարակին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս, խնդիրը, մարտահրավերներ հարմարացնել սովորողների անհատական առանձնահատկություններին: Այսպիսով դաստիարակը կարող է ավելացնել կամ պակասեցնել բառատետրում գրվող անծանոթ բառերի քանակը, որոնք աշակերտը պետք է սովորի ներառական խմբերում: Տարբերակված ուսուցումը կարող է լինել ՈՒԸՄԿ գործընթացի մի մասը: Երբ սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները վաղօրոք նկատի է առնվում և մատչելի դասավանդումը դրվում է պարապմունքի պլանավորման հիմքում, բոլորը սկսում են ավելի լավ սովորել:

Ուսումնառության միջավայրի ընդհանուր ձևավորումը և ներառումը

Համընհանուր ձևավորման գործածումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումը ուղղված է սովորողների՝ որպես սովորական և առանձնահատուկ երեխաների տարբերակումը վերացնելուն՝ ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին:

Բազմամասնագիտական թիմ կամ համատեղ դասավանդում

Ի՞նչ է բազմամասնագիտական թիմը: Այն բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական խմբում: Թիմը կազմված է մասնագետներից, ընտանիքի անդամներից, իսկ հարկ եղած դեպքում թիմին միանում է նաև երեխան: Թիմի գործողությունները կարող են լինել տարբեր՝ երեխայի գնահատումից մինչև նրա անհատական ծրագրի քննարկում կամ երեխայի հաջողությամբ օժանդակելու համատեղ աշխատանքի պլանավորում: Բազմամասնագիտական թիմի ներսում մասնագիտական համագործակցությունն օգնում է ապահովելու երեխայի և նրա ընտանիքին վերաբերող աշխատանքներին համապարփակությունը ներառելով կրթության ուսումնական սոցիալական և ֆունկցիոնալ կողմերը: Թիմի վերջնական նպատակը երեխաներին և նրա ընտանիքին մատուցվող ծառայության բարելավումն է: Բազմամասնագիտական թիմի կազմը որոշելուց հետո մասնակիցներից մեկ-երկուսը նշանակում են խմբի համակարգող: Թիմի ղեկավարը սովորաբար դառնում է դաստիարակը, հոգեբանը կամ երեխայի հարցերով զբաղվող անձը: Թիմի գործունեության հիմնական ձևը թիմային աշխատանքն է: Այդ ժամանակ բոլորն էլ ունենում են լարված ու արժևորված լինելու զգացողություն:

Գնահատման հիմնախնդիրները ներառական կրթության համատեքստում

ՀՀ-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարիքների գնահատման ոլորտում ծավալված արմատական բարեփոխումների շրջանակում վերջերս հատուկ ուշադրություն է դարձվում

ներառական նախադպրոցական հաստատությունների դաստիարակների համար այն ավելի համապատասխան և պիտանի դարձնելու: Համընդհանուր գնահատման նոր համակարգը մշակվել և ներկայումս կիրառվում է է Հայաստանի տարբեր գյուղերում:

Գնահատման նոր եռաստիճան համակարգ

Համաձայն կրթական կարիքի գնահատման նոր համակարգի՝ այն իրականացվում է երեք մակարդակներում:

1. Առաջին մակարդակի գնահատում անցկացնում են դաստիարակները խմբում: Եթե պարտեզում գործում է բազմամասնագիտական թիմ, որի կազմում կան հոգեբան, լոգոպեդ և հատուկ մանկավարժ, ապա թիմի անդամները օգնում են դստիարակին: Այս մակարդակի գնահատման արդյունքից ելնելով մշակվում է միջամտության ծրագիր, որում օգտագործվում է նաև բազմամասնագիտական թիմի ռեսուրսը, եթե պարտեզն ունի նման թիմ: Ծրագիրը ներառում է խնդրի լուծմանն ուղղված ռազմավարություն:

2. Եթե խնդիրն ավելի բարդ է և երեխայի կրթական կարիքներն ավելի լուրջ են, երեխայի աջակցության պլանը կազմվում է երկրորդ մակարդակի գնահատմամբ, որն իրականանում է ՏՄԱԿ-ը: Կենտրոնի թիմը մանկապարտեզի դաստիարակի հետ միասին կատարում է երեխայի ամբողջական գնահատում: Բազմամասնագիտական թիմերը համադրում են գնահատման արդյունքները կրթական չափորոշիչների հետ և իրենց կողմից առաջարկվող նոր մոտեցումները քննարկում են դաստիարակի հետ:

3. Երրորդ մակարդակի գնահատումն անցկացվում է տարածքային ՄԱՀԿ-ների աշխատանքները համակարգող Երևանի հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից: Կենտրոնում կատարվում է կրթական կարիքի առավել բարդ ու վիճահարույց դեպքերի գնահատումները: Գնահատման գործընթացը և գործիքները նույնն են, ինչ տարածքային գնահատման կենտրոններում:

Գնահատման այլընտրաքային մոտեցումներ

Կրթության մեջ կիրառվում է գնահատման երկու հիմնական տեսակ՝ ամփոփիչ և ձևավորող: Ամփոփիչ գնահատումը հիմնականում իրականացվում է ուսումնառությունից հետո և արտացոլում է սովորողի առաջընթացը: Դա արվում է որոշակի ժամանակահատվածում: Այն համարվում է գիտելիքի գնահատում նաև ներառում է առաջադիմության ստուգման տարբեր թեստեր:

Ձևավորող գնահատումը կատարվում է ուսուցման ընթացքում և արտացոլում է սովորողի ընթացիկ ձեռքբերումները: Այս գնահատմանը բնորոշ են հաճախակի մեկից հինգ որպե տևողությամբ չափումները: Ձևավորող գնահատումը տեղեկություն է տալիս երեխայի սովորելու և ուսուցման արդյունավետության մասին:

Ինչ է դրական վարքի ձևավորմանն ուղղված միջամտությունն ու աջակցությունը

Դրական վարքի ձևավորմանն ուղղված միջամտությունն ու աջակցությունը կազմված է յուրաքանչյուր աստիճանում իրականացվող վարքի օժանդակության չորս առանցքային տարրերից՝

- Որոշ երեխաների և ողջ խմբի համար սահմանված ցանկալի վարքագծի վերջնարդյունքները, որոնց ձգտում են հասնել դաստիարակները և մանկապարտեզի տնօրինությունը
- Տվյալները կամ տեղեկությունները, որոնցից օգտվում է պարտեզի անձնակազմը

- Ցանկալի արդյունքի հասնելու համար ՆՈՒՀ կողմից կիրառվող փաստահենք մոտեցումները
- Դրական վարքի ձևավորմանն ուղղված միջամտության ու աջակցության արդյունավետություն ու կայունություն ապահովող միջոցները:

Վերջին կետի ռազմավարության առաջին աստիճանը կենտրոնացված է ողջ ՆՈՒՀ-ի վրա՝ նպատակ ունենալով ներդնելու երեխաների շրջանում հաճախ հանդիպող անցանկալի վարքագծերի կանխման դրական ռազմավարություն:

ԱՈՒՊ-ի դերը ներառական կրթության կազմակերպման գործընթացում

ԱՈՒՊ-ի միջոցով ձևակերպվում են ԿԱՊԿՈՒ սվորողների նպատակները: Երեխաների անհատական պլանը կազմված է երկու բաղադրիչներից՝ ԱՈՒՊ և ՄԱԾԱՊ:

ԱՈՒՊ-ը գրավոր փաստաթուղթ է, որում սահմանվում են ԿԱՊԿՈՒ երեխայի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ առանձնահատուկ նպատակները:

ՄԱԾԱՊ-ը ներկայացնում է երեխայի ուսումնական, սոցիալական և ֆունկցիոնալ նպատակներին հասնելու յուրահատուկ միջամտությունները: Ստորև հավելվածում ներկայացվում է ԱՈՒՊ-ի օրինակելի ձևը:

Այդ փաստաթղթերը էական նշանակություն ունեն ՆՈՒՀ-ում որովհետև ներառական միջվայրերում յուրաքանչյուր երեխայի դեպքում կարող է կիրառվել դասավանդման յուրահատուկ մոտեցումներ և ակնկալվել տարբեր կրթական վերջնարդյունքներ: ԱՈՒՊ-ի նպատակը ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման նպատակների ու խնդիրների ձևակերպումն է, դրանք կարող են վերագնահատվել և փոփոխվել երեխայի ուսումնառության ընթացքում: ԱՈՒՊ-ը օգտակար է դաստիարակների, ծնողների և երեխաների համար, քամի որ պարունակում է տեղեկատվություն այն մասին, թե ինչ է երեխան սովորելու պարտեզում:

ՄԱԾԱՊ-ը դաստիարակներին օգնում է իմանալ, թե ինչ թերապևտիկ կամ լրացուցիչ, հատուկ կրթական ծառայություններ է ստանում երեխան, իսկ դաստիարակներին օգնում է պլանավորելու իրենց աշխատանքը երեխայի կարիքներին համապատասխան:

ԱՈՒՊ-ին առնչվող կարևոր նկատառումները

Ընտանիքի մասնակցությունը ԱՈՒՊ-ի կազման գործընթացին ամենակարևոր գործոներից է: Չնայած դաստիարակները և գնահատող փորձագետները լավ գիտեն երեխաներին, այնուամենայնիվ, երեխաների կյանքի փորձագետները նրանց ծնողներն են:

ԱՈՒՊ-ը կազմելիս ներկայումս ծնողներից խնդրում են նկարագրական տեղեկություններ տալ իրենց երեխայի ֆունկցիոնալության ընթացիկ մակարդակների երեխայի նախասիրությունների մասին:

Սակայն անհատական ուս պլանի մշակման իդեալական կազմակերպման համար ծնողների և երեխայի կարիքները պետք է հաշվի առնվեն կրթությանն առնչվող նպատակները, աջակցության աստիճանները և կրթության՝ ուշադրության արժանի ամենակարևոր ուղղությունները որոշելիս: ԱՈՒՊ-ը ամենակարևոր գործիքներից է, որով կարելի է օգնել ԿԱՊԿՈՒ երեխաներին իրականացնելու իրենց կրթության իրավունքը դպրոցում: Այն ներկայացնում է կրթության լավագույն գործելակերպի օրինակ, քանի որ կա բազմամասնագիտական թիմ, որը գաղափարներ է տալիս երեխաների նպատակների վերաբերյալ:

Բազմազան կրթական կարիքներ ունեցող երեխաներին դասավանդելու երեք մոտեցում

Սովորողների բազմազանությունը հաշվի առնելով խմբերում կարելի է կիրառել դասավանդման տարբեր մոտեցումներ: Այս բաժնում ներկայացվում է երեք մոտեցում, որոնց արդյունավետությունը հիմնավորվել է տարբեր երկրներում իրականացված հետազոտություններով: Այս մոտեցումները բազմազան ձևերով դասավանդում են ապահովում և կարող են կիրառվել տարբեր առարկաների դասաժամերին: Դրանք ոչ միայն բարելավում են ուսումնառության վերջնաարդյունքները, այլևս սովորելը դարձնում են ավելի հետաքրքիր: Դրանք կարող են կիրառել նաև հատուկ մանկավարժները, հոգեբանները, լոգոպեդները:

Հաջող ներառման համար անհրաժեշտ է, որ դաստիարակները ներգրավված լինեն մասնագիտական զարգացման գործընթացում և կիրառեն դասավանդման արդյունավետ մոտեցումներ և ռազմավարություն:

Այլընտրաքային, լրացուցիչ հաղորդակցման դերը ներառական կրթության մեջ

Այլընտրաքային լրացուցիչ հաղորդակցման համակարգեր

ԱԼՀ-ն իրենից ներկայացնում է ցանկացած սարք, համակարգ կամ մեթոդ, որը բարելավում է հաղորդակցման դժվարություններ ունեցող անձանց հաղորդակցման կարողությունները: ԱԼՀ-ն ներառում է ներքին և արտաքին խոսքի դժվարություններ ունեցող անձանց խոսքը փոխարինող կամ այն լրացնող մոտեցումներ: ԱԼՀ-ն կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ օժանդակ միջոցներով և առանց օժանդակ միջոցների իրականացվող այլընտրաքային հաղորդակցումը:

Առանց օժանդակ միջոցների իրականացվող այլընտրաքային հաղորդակցումը որևէ տեխնիկական միջոցի օգտագործում չի ենթադրում, փոխարենը պահանջում է շարժումների և դրանց վերահսկողության բավարար մակարդակ: Այլընտրանքային հաղորդակցման այս խմբին պատկանող ձևերից են ժեստերը, մետանախոսությունը, դիմախաղը, ձայնարձակումներն ու մարմնի լեզուն:

Օժանդակ միջոցներով իրականացվող այլընտրանքային հաղորդակցումը պահանջում է որևէ արտաքին աջակցության, միջոցի, սարքի առկայություն: Դա կարող է լինել ինչպես էլեկտրոնային, այնպես էլ ոչ էլեկտրոնային: Օժանդակ միջոցներով իրականացվող այլընտրաքային հաղորդակցման տարբերակներն են ցածր, միջին և բարձր տեխնոլոգիական միջոցները: ԱՍԽ ունեցող երեխաների համար հաղորդակցման այլընտրանքային ձևերը կարող են ունենալ երեք տեսակի կիրառություն:

1. ԱԼՀ-ն կիրառվում է ոչ լիարժեք խոսք ունեցող երեխաների կողմից որպես բառապաշարի սակավությունը լրացնող և խոսքի քերականական կողմի թերությունները հաղթահարելուն նպաստող միջոց:

2. ԱԼՀ-ն դեռևս չխոսող երեխայի համար ծառայում է որպես ժամանակավոր հաղորդակցման միջոց մինչև խոսքի ձևավորումը:

3. ԱԼՀ-ն ընդհանրապես չխոսող երեխայի համար ծառակում է որպես միակ հաղորդակցման միջոց:

ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալական և հոգեբանական ներառման բարելավումը

Ի՞նչ է սոցիալական ներառումը և հոգեբանական ներառումը

Թե սոցաիալական, թե հոգեբանական ներառումը սկսվում է այն համոզմունքից, որ բոլոր երեխաները և երիտասարդները իրավունք ունեն իրնց ընտրած հասակակիցների հետ զարգացնելու ու պահպանելու ընկերական և սոցիալական այլ հարաբերություններ՝ ապրելով հանրության լիիրավ անդամի զգացումով և լիարժեքորեն ընդգրլվելով համայնքում:

Իրական ներառումը կրթության նկատմամբ հավասարակշռված մոտեցման արտացոլում է, երբ երեխամերը ներառված են ոչ միայն ֆիզիկական և ուսումնական, այլև սոցիալական և հոգեբանական առումով:

Սոցիալական ներառումը և հոգեբանական ներառումը սերտորեն կապված է այնպիսի գործելակերպի հետ, որոնք հաշմանդամություն ունեցող երեխաներին օգնում են զարգացնելու դրական սոցիալական հարաբերությունների ձևավորմանն

ու պահպանմանն առնչվող անձնական կարողություններ և տալիս են հաշմանդամություն չունեցող հասակակիցների հետ փոխադարձ ընտրությամբ կապվելու հնարավորություններ: Դաստիարակները և բազմամասնագիտական թիմի անդամները պատասխանատու են բոլորի կրթության համար հավասար հնարավորություններ ապահովելու համար:

Թե սոցիալական, թե հոգեբանական ներառումը բարդ գործընթացներ են:

Ինչու՞ աջակցել սոցիալական և հոգեբանական ներառմանը:

Սոցիալական և հոգեբանական ներառման խթանումը կարևոր է ոչ միայն անհատի հիմնական իրավունքները հարգելու, այլև այն առումով, որ դրանք ուղիղ համեմատական են հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաների և երեիտասարդների ձեռքբերումներին:

Հանրակրթական ծրագիրն ապահովում է հասակակիցների շփման բնական իրավիճակ, երբ երեխաները միասին կատարում են նույն հանձնարա-րությունները:

ԿԱՊԿՈՒ բոլոր երեխաների լիարժեք ներառում պահովող ՆՈՒՀ-ի կամ համայնքային միջավայրի ստեղծումը կարող է մարտահրավերներով հարուստ լինել:

Կուտակված գիտելիքի կիրառումը կարող է հիմք դառնալ այնպիսի գործընթացների մեկնարկի համար, որոնք կտանեն դեպի ավելի բարձր աստիճանի սոցիալական և հոգեբանական ներառման:

Ներառումը իրականացնելը դժվար գործ է և պահանջում է թե ջանք, թե աջակցություն: Անգամ առկա ռեսուրսները դաստիարակների համար հասանելի են դառնում և կիրառվում են ժամանակի ընթացքում:

Ներառական ուսումնառության ծառայություն

Ներառական ուսումնասիրության ծառայությունը մեկտեղում է ԿԱՊԿՈՒ և ոչ ԿԱՊԿՈՒ երեխաների ուսուցումը ու փորձառությունները այնպես, որ խմբասենյակում անցկացվող պարապմունքները որոշակիորեն կապվում են համայնքային ծառայությունների հետ: Ներառական ուսումնառության ծառայությունը կարող է օգնել բոլոր երեխաներին քանի որ ունի հստակ բովադակություն: Ներառական ուսումնառության ծառայությունը ներառում է որոշակի բնորոշիչներ:

Ներառական ուսումնառության բարձորակ ծառայության բաղադրիչները





Վերլուծական անդրադրձը և ինտեգրված ուսուցումը

Ներառական ուսումնառության ծառայության կարևոր բնորոշիչներից մեկը ծրագրերի ուղղակի կապն է ուսումնական խնդիրներին:

- *Խնդրահենք ուսումնառություն:* Ներառական ուսումնառության ծառայության հիմական առանձնահատկությունն է, որ երեխաներին սովորեցնում է զբաղվել համայնքային իրական խնդիրների լուծմամբ: Այս մոտեցումը վերցված է խնդրահենք ուսումնառությունից:
- *Երեխաների ձայնը:* Երեխաների ձայնի իրավունքն էական է: Այս մոտեցումը հիմնված է այն համոզմունքի վրա, որ աշակերտներն ունեն իրենց ինքնորոշումը կրթական միջավայրի բաղադրիչներում փորձարկելու և անկախ ինքնուրույն ուսումնառության մեջ ներգրավելու հնարավորություն:
- *Համագործակցություն:* Ներառական ուսումնառության արդյունավետ ծառայության առանձնահատկություններից մեկը համատեղ համագործակցային ուսումնառության ռազմավարության կիրառումն է:

Վաղ տարիքի երեխաների զարգացման ներառականության ծրագրեր

Բոլոր երեխաների համար վաղ մանկության շրջանը կարևոր նշանակություն ունի հետագա շարունակական կրթության և զարգացման հնարավոր խանգարումների ու հաշմանդամության կանխարգելման համար: Զարգացման խանգարումներ կամ հաշմանդամություն ունեցող երեխաների համար չափազանց կարևոր է ծառայությունների հասանելությունը վաղ տարիքում, քանի որ մեծ է հավանականությունը, որ նրանք կհասնեն իրենց ներուժին համապատասխան, լիարժեք զարգացման:

Վաղ տարիքից երեխաների զարգացում եզրույթը մատնանշում է ծննդից մինչև ութ տրեկան երեխայի զարգացումը տարբեր միջավայրերում: Վաղ տարիքի երեխաների զարգացումը ներառում է ենթափուլեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ կարիքները: Ընդհանուր առմամբ միջամտությունների առումով կարևոր են հետևյալ փուլերը.

- Հղիության և մինչծննդյան շրջան, նախածննդյան խնամք, բժշկի հսկողությամբ ծննդաբերություն, հետ ծննդյան խնամք

- Զրոյից երեք տարեկան- ծնողների կրթություն, սնուցումը և զարգացումը խթանող վաղ միջամտություններ, տնային խնամք, մսուրներ
- Երեքից վեց տարեկան- ծնողների կրթություն, նախադպրոցական հաստատություններ կամ մանկապարտեզներ
- Վեցից ութ տարեկան- անցում կրթուցյանը, տարրական կրթության հաստատությունների բարեփոխում

Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ապահովում են երեխաների վաղ ուսումնառության, առողջության, սնուցման և պաշտպանության համակողմանի ծառայությունների տրամադրում: ՀՀ երեք հիմնական նախարարություններն են կարգավորում բոլոր երեխաներին մատուցվող ծառայությունները.

1. Կրթության և գիտության նախարարությունը, որը պատասխանատու է վաղ տարիքի երեխաների ուսուցման կզմակերպման համար:
2. Առողջապահության նախարարություն, որը պատասխանատու է առողջության սնուցման և զարգացման ծրագրերի համար:
3. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որը պատասխանատու է երեխաների պաշտպանության և խնամքի համար:

Ներառական կրթական արժեհամակարգը որպես այդ կրթության շրջափուլային զարգացման հանրագումար

Ներառական կրթությունը վայր չէ: Ներառական կրթությունը նշանակետ չէ: Ներառական կրթության համար դեղատոմս չկա, նրա հետ առնչություն ունեցող առանձին գործառույթներն ավելացնելով ու պակասացնելով արժեքը չես փոխի:

Ըստ էության վերջնական նպատակային արդյունքը սոցիալական ներառումն է, ինչը շատ ավելին է, քան վերջինս զարգացման հանրագումարը:

Ներառական կրթությունը բաղկացած է փիլիսոփայական դիրքորոշումից և մի շարք գործելակերպի ամբողջությունից: Դրանք ուղղված են բոլոր երեխաների կրթության լիարժեք մասնակցության իրավունքի առաջանցիկ իրականացման ապահովմանը:

Ներառական կրթությունը Հայաստանում և ամբողջ աշխարհում

Հայաստանն արդեն երկար տարիներ ներառական կրթություն է իրականացնում տարածաշրջանի բազմաթիվ երկրների նման: Այն այստեղ դիտարկվում է որպես կրթության զուգահեռ գործող համակարգ: Հաշմանդամություն ունեցող երեխաների

կարիքների համար օրենքով ամրագրված է, ըստ կրթական համակարգի 2009թ-ին իրականացված գնահատման՝ կառավարման շատ մարմիներ դեռևս կողմ են հատուկ դպրոցների պահպանմանը: Ներառական հաստատությունները լայնորեն հասանելի չեն, ոչ բոլոր մարզերն են իրականացնում ներառական կրթությունը: Ստացվում է, որ ներառական կրթություն իրականացնող ՆՈՒՀ-ի միայն որոշ մասի համար են:

Ներառական կրթության առաջընթացը դանդաղ է, բայց կայուն:

Ներառական կրթության համընդհանուր սկզբունքները

Ներառական կրթությունը կրթութրյուն է բոլորի համար, հավասար են բոլորը:

1. Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, ոչ թե երեխայի հարմարեցումը:
2. Ներառումը երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց ընտանիքներում՝ առանց ընտանիքից մեկուսանալու:
3. Ներառական կրթությունը կարող է բարձրացնել բոլորի կրթության որակը:

Ներառական կրթության դրական կողմերը

- Կրթության իրավունքի իրացում
- Կրթություն է բոլորի համար
- Հարմարեցված ծրագրի և հանդուրժողականություն
- Դաստիարակի մեթոդական շարունակական զարգացում
- Երեխաների ապրումակցման զարգացում

Ներառական կրթության ներդրման մարտահրավերները

- Փորձառության պակաս կամ բացակայություն
- Դասավանդման մեջ ներառական մոտեցումենրի պակաս
- ՆՈՒՀ-ում ներառման գործընթացի ոչ արդյունավետ կազմակերպում և կառավարում
- Ներառականության գաղափարի սխալ ընկալումը
- Ֆիզիկական միջավայրի ոչ լիարժեք պայմաններ

Ներառական կրթության իրավական օրենսդրական հիմքերը

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին
2. ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին
3. ՀՀ հանրակրթության մասին օրենք

Եզրակացություն

Եզրափակելով ուսումնասիրության արդյունքները՝ ընդհանուր առմամբ հարկ է նշել, որ ներառական կրթության համակարգը կարևորագույն քայլ է ավելի առողջ, հանդուրժող ու հոգատար հասարակություն ունենալու համար:

Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները: Եթե ներառական կրթություն մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ կարիքներ ունեցողները: Սակայն մինչև ներառական կրթության անցնելը ՆՈՒՀ-ը պետք է համալրված լինի համապատասխան մասնագետներով՝ հոգեբան, լոգոպեդ, հատուկ մանկավարժ և այլն, որպեսզի ուսումնական գործընթացը լինի ավելի արդյունավետ և ճիշտ կազմակերպված:

Ներառական կրթության իրականացման առավելությունների ու առկա դժվարությունների ուսումնասիրությունը ևս մեկ անգամ հնարավորություն տվեց առավել հստակ պատկերացում կազմել ներառական կրթության, ներառման քաղաքականության, այս ոլորտում հանրակրթական ՆՈՒՀ-ի, ձեռքբերումների, առկա դժվարությունների, բացթողումների և այլնի մասին:

Բազմաթիվ մանկավարժներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն հատուկ հմտություններ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաների հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և կնպաստի երեխաների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի մանկավարժը՝ բոլոր երեխաների որակյալ կրթության համար:

Այս ամենից ելնելով հանգեցինք հետևյալին.

Ներառումը մի մոտեցում է, որի դեպքում պետք է հաշվի առնվի երեխաների բազմազանությունը, երեխային ընդունել այնպիսին, ինչպիսին նա կա և ուսումնական պլաններն ու նպատակները հարմարացնել սովորողների ընդունակություններին ու պահանջմունքներին: Այս պրոցեսում կարևոր է դաստիարակների, բազմամասնագիտական խմբի յուրաքանչյուր անդամի, ծնողների և նրանց դերը, ովքեր իրենց փորձն ու գիտելիքնրն են նրեդնում, որպեսզի յուրաքանչյուր երեխա

կարողանա սովորել իր համար առավելագույն օգուտով: Մնում է հուսալ, որ կայացվելիք որոշումը նպատակ չունի դառնալու պետական հերթական պլանի կատարում, իսկ ներառական կրթության ինստիտուտը կդառնա այն առաջին քայլը, որը կապահովի հատուկ կարիքներով անձանց լիիրավ ինտեգրումը հասարակությանը:

Գրականություն

1. Ներառական կրթության ռազմավարություն, դասագիրք երկրորդ, հրատարակչություն 2020:
2. Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում, Երևան 2020
   Սիփան Հայրապետյան
   Կարեն Նազարյան
   Զավեն Տոնոյան
3. Ներառական կրթության իրականացման ուղեցույց հանրակրթական հաստատությունների և մանկավարժական աշխատողների համար, 2008: